

Ամփոփումներ

Համիլտոնյան շրջանցումներ Մեյնելի պայմաններին բավարարող կողմնորոշված գրաֆներում *Ս. Խ. Դարբինյան*

Ապացուցվում է, որ եթե p -գազաթանի, $p \geq 3$, կողմնորոշված G գրաֆում ցանկացած իրարից տարբեր երկու ոչ կից գազաթանների լուկալ աստիճանների գումարը փոքր չէ $2p-2$ թվից, ապա G կողմնորոշված գրաֆը պարունակում է համիլտոնյան շրջանցում:

ՄԻՍ-ների մակերեսի միմիանիզացման մի մեթոդի մասին *Ի. Ա. Կարապետյան, Ս. Խ. Դարբինյան*

Դիտարկված է մի խնդիր, որը ծագում է էլեկտրոնային սխեմայի ուղեգծումից հետո, նրա պատկերի սեղմման ընթացքում: Խնդրի լուծման համար գտնված է բազմանդամային $O(n^{1/3})$ բարդության, ճշգրիտ ալգորիթմ:

Մուտքերով հարահոսային գրաֆի պրոցեսներին համապատասխանող տրեկային լեզուներ *Կ. Բ. Համբարձումյան*

Հետազոտված է մուտքերով հարահոսային գրաֆի պրոցեսներին համապատասխանող տրեկային լեզուների ճանաչելիությունը: Կամայական հարահոսային պրոցես սահմանում է մասնակի կարգավորված գրաֆ, որը համեմատում է գրաֆ բացվածքի ենթագրաֆ: Եվ կարելի է խոսել պրոցեսի գրաֆի գազաթանների հաջորդականությունների լեզվի մասին, որը պահպանում է էլեմենտար իրադարձությունների միջև պատճառահետևանքային կապը, որոնք համեմատում են պրոցեսների պրոտոկոլներ: Աշխատանքում ստացվել են մուտքերով հարահոսային գրաֆի լեզուների ճանաչելիության մոտ արդյունքներ:

Օրինակների լրիվ համակարգի կառուցումը ԱԳՄ-ցանցում բաշխված ծրագրերի համար *Ա. Յու. Շուրպյան*

Առաջարկվում է ավտոմատ զանգվածային մեթոդների ցանցի հաշվարկային մոդել և ներմուծվում է հատուկ հրամանների հաշվիչներ և հերթեր պարունակող բազմության վրա որոշված բաշխված ծրագրի սահմանումը: Ծրագիրը կազմված է մի քանի կլինետական ծրագրերից, որոնք փոխգործում են մեկ սերվերային ծրագրի հետ: Հետազոտվում է այդպիսի ծրագրերի շտկման խնդիրը կորեկա իրագործման համար: Յույց է տրվում, որ ծրագրերի բավականին լայն դասի համար ցիկլերի խորության սահմանափակման դեպքում օրինակների լրիվ կառուցման խնդիրը ալգորիթմորեն լուծելի է:

Տեստերի կառուցման ալգորիթմ անալոգային սխեմաների որոշ դասի համար *Ս. Ն. Մանուկյան*

Առաջարկվում է որոշ տիպի անալոգային սխեմաների համար տեստերի կառուցման խնդրի մաթեմատիկական ձևակերպում և նրա հիման վրա կառուցված է ալգորիթմ այդ տեստերը ստանալու համար:

Ներքին կետերի սիմպլեքս մեթոդի համար մոր ուղղորդ կանոնները և նրանց
հետազոտումը Կլի-Մինթիի խորանարդի վրա
Բ. Ա. Տունյան

Առաջարկվում է ներքին կետերի սիմպլեքս մեթոդի համար ուղղորդ կանոնների ընտրման
արեք տարբերակներ, որոնք Դանցիգի առաջին կանոնի զարգացումն են: Ցույց է տրված,
որ Կլի-Մինթիի խնդրի լուծման համար առաջարկված երկու կանոնների ընտրման դեպ-
քում պահանջվում է կատարել 2n քայլ, իսկ երրորդ կանոնի ընտրման դեպքում ստացվում
է Դանցիգի սովորական սիմպլեքս մեթոդի առաջին կանոնը:

Տված գործակիցներով պատկերի սեղմման և վերականգնման ալգորիթմներ
հիմնված Հադամարի ձևափոխության վրա
Ա. Յ. Բադեյան

Մշակված են Հադամարի ձևափոխության վրա հիմնված և տրված սեղմման գործակցով
16x16 չափանի պատկերների սեղմման և վերականգնման արագ ալգորիթմներ:

Հիրքիդ օրթոգոնալ ձևափոխությունների մշակում
Դ. Ռ. Դարբինյան

Պատկերների մշակման խնդրում տվյալների վեկտորի վրա օրթոգոնալ ձևափոխություն
կատարելիս, օգտագործվում է տվյալ ձևափոխության մատրիցի արագ ալգորիթմը: Այս
հոդվածում դիտարկվում են կոմպլեքսոված օրթոգոնալ ձևափոխություններ, որոնք ստաց-
վում են Ֆուրիեի, Հադամարի, Հարտլիի և կոսինուս ձևափոխությունների զույգ առ զույգ
քաղմասպատկման շնորհիվ:

Փոխազդող կապուղու հաղորդման հասանելի արագությունների մասին
Մ. Ե. Հարությունյան

Ուսումնասիրվում է փոխազդող կապուղին ընդհանուր, ինչպես մաս և այն դեպքում, երբ եր-
կու կողավորիչներից մեկը ստանում է մյուս կողավորիչի ազդանշանների մասին ամ-
բողջական տեղեկություն: Միջին սխալի հավանականության դեպքում, կառուցված են Ե-
ունակության տիրույթի պատահական կողավորման սահմաններ:

Երկու մուտքով և երկու ելքով կապուղու Ե-ունակության տիրույթի
պատահական կողավորման սահմանը
Մ. Ե. Հարությունյան, Ա. Հ. Ամիրբեկյան

Ուսումնասիրված է երկու մուտքով և երկու ելքով կապուղին: Միջին սխալի հավանականու-
թյան դեպքի համար կառուցված է Ե-ունակության տիրույթի պատահական կողավորման
սահման:

Քաղմաքիվ հասցեատերերով աղբյուրի կողավորման արագության
կախումը հուսալիություններից և շեղման մակարդակներից
Ե. Ա. Հարությունյան, Ա. Ն. Հարությունյան և Ա. Ռ. Ղազարյան

Հոդվածում դիտարկված է աղբյուրի քաղմաքի մկարագրման մի համակարգ, որում դիսկ-
րետ առանց հիշողության աղբյուրի հաղորդագրությունները կողավորվում են մեկ կո-
դավորիչով և ապակոդավորվում են շատ ապակոդավորիչներով: Այս համակարգի համար
Գամալը ու Կովերը գտել են շեղման մակարդակներից կախված լավագույն կոդերի փոք-
րագույն հասանելի արագությունը: Որոշված է ամեն մի ապակոդավորիչում աղբյուրի հա-

դորդագրությունների տված հուսալիությանը և շեղման մակարդակով վերականգնող ապահովող լավագույն կողերի փոքրագույն հասանելի արագությունը: Մասնավորապես, այս արագությունները հաշված են շեղման մակարդակների որոշակի և հուսալիությունների տարբեր դեպքերի համար:

Ծանր մետաղներով աղտոտված տարածքի կոմպյուտերային քարտեզագրման կիրառումը Երևան քաղաքի համար
Ե. Ա. Հարությունյան, Ա. Կ. Մաղաթեյան, Ա. Յ. Պետրոսյան

Հոդվածում դիտարկվում է ծանր մետաղներով աղտոտված տարածքի համակարգչային քարտեզագրման խնդիրը: Հիմնական նպատակը հետազոտվող տարածքում ծանր մետաղների պարունակության և բաշխման միջև կապի հայտնաբերումն է: Տրված է մակ խմբի լուծման պարզագույն ալգորիթմ:

Հայաստանում պալարախտի համաճարակաբանական ցուցանիշների դիմամիկայի վիճակագրական վերլուծություն
Հ. Վ. Գրիգորյան, Հ. Գ. Տոնոյան, Ե. Պ. Ստամբոլցյան, Ի. Ա. Սաֆարյան, Ե. Ա. Հարությունյան

Ուսումնասիրվում է Երևան և Գյումրի քաղաքներում պալարախտի հիմնական համաճարակաբանական ցուցանիշների (հիվանդացություն և մահացություն) դիմամիկան և կառուցվածքը 1987-1997 թվականներին: Հայտնաբերված են հիվանդացության և մահացության ցուցանիշների առավել նշանակալի փոփոխությունների տարիները:

ՀՀ ՍՊԱԾ-ի դիտումների ցանցի Կարճադրյուրի կայանի ջրաերկրաքիմիական տվյալների վերլուծություն
Հ. Վ. Ներսեսյան

Վիճակագրական ոչպարամետրական եղանակները կիրառված են ՀՀ ՍՊԱԾ Կարճադրյուրի կայանի ստորերկրյա ջրերում հեղիումի բաղադրության ժամանակային շարքի վերլուծության համար: Ցույց է տրվում սեյսմիկ ուժեղ իրադարձություններից առաջ շարքի բնութագրիչների փոփոխությունների հայտնաբերման օգտագործվող ալգորիթմի արդյունավետությունը: Ի համեմատություն Արարատի և Քաջարանի կայանների մախիկում կատարված հետազոտությունների, նշված են Կարճադրյուրի կայանի տվյալների նկատմամբ ալգորիթմի կիրառման յուրահատկությունները:

Դիսպանսերային հաշվառման կոմպյուտերային «ՕՀԿՕ» համակարգը
Պ. Ա. Պետրոսյան

Քննարկվում է դիսպանսերային հաշվառման կոմպյուտերային համակարգ՝ ստեղծված Հանրապետական հակառոտացրանական դիսպանսերում կիրառելու համար: Այդ համակարգը ընդգրկում է ավելի քան 33 հազար գրառումներ և ապահովված է քարտադարանի վարման, տվյալների պատկերամոր մերկայացման, ԱՄԿ-ի կողմից երաշխավորված երկու հաշվառման ձևերով ամփոփման և վերլուծման միջոցներով, ինչպես նաև տեղեկագիր-համակարգով:

Հերթի բաշխումը ժամանակի բաժանման կարգականոնի դեպքում
Վ. Գ. Մահակյան, Ա. Յու. Շուքրոյան

Ուսումնասիրված են հերթերի երկարությունները զանգվածային սպասարկման համակարգում, պրոցեսորի բաժանման կարգականոնի դեպքում: Ստացված է անդրադարձ

հավասարումների համակարգ, որը թույլ է տալիս հաշվել հերթի հավանականությունների
քաշխումը:

Transaction model for (distributed) Data bases

K. A. Markarian

Discussion of this paper is directed to the summation of applicational and related with him theoretical works in area of Industrial Informarion Managment System. Summation will be consist two parts. Presented here part one is analyse of problems and used structures in present state. Second part of work will be present to the research of owners of data.

Պատկերների հիստոգրամի վերլուծություն և սեղմման արդյունավետ գործակցի
որոշում հիմնված Հադամարի ձևափոխության վրա

Ս. Բ. Ալավերդյան

Աշխատանքը նվիրված է պատկերների ըստ բլոկների նախնական մշակմանը, բլոկների
համասեռության աստիճանի գնահատմանը և դրանց արդյունավետ սեղմման գործա-
կիցների որոշմանը: Բլոկների հիստոգրամների վերլուծության միջոցով որոշվում են
սեղմման գործակիցները: Պատկերների սեղմման և վերականգնման համար օգտագործ-
վում է Հադամարի ձևափոխությունը: